



22.10.2011

2011թ. հոկտեմբերի 20-21-ին Երևանում գումարված Եվրոպական շարժման միջազգային կոնգրեսի առաջնորդներ Փաթ Կոքսը և Շարլ Ֆերդինանտ Նոթոմբը, երեկ՝ հոկտեմբերի 21-ին, օրվա 2-րդ կեսին, կոնգրեսի աշխատանքների ավարտից հետո այցելել են Էրեբունի ամրոցի միջնաբերդ և թանգարան՝ ծանոթանալու Երևան մայրաքաղաքի բնօրրանին: Եվրոպական շարժման առաջնորդները Հայաստանի եվրոպական ինտեգրման ճանապարհին կարևորել են պատմամշակութային ժառանգության պահպանության սկզբունքները և մոտեցումները, մասնավորապես նշել են քաղաքային միջավայրում հնագիտական ժառանգության ներկայացման բարդությունները: